հետ (դա առանձին քննության խնդիր է, որին դեռ կանդրադառնանք փոքր-ինչ մանրամասն):

Ծրագիր-խոսքումի կառուցվածքային նպատակը կենտրոնացված պատում ստեղծելն է, երբ տարաբնույթ շեղումները հնարավորինս բացառվում են: Որպեսզի չշեղվի բուն նյութից, պատմիչը ներկայացվող իրադարձություններին առնչվող, բայց տվյալ համաբնագրում ոչ այնքան կարևոր որոշ դեպքեր ու իրադարձություններ հիշատակում է համառոտ՝ հարկավոր տեղում դրանց մասին ևս պատմելու ***խոսքումով***: Նշենք, որ դա բացի ընթերցողին խոստում լինելուց, նաև հենց իր՝ պատմագրի համար զուտ ***ծրագրային*** նշում է, որպեսզի այդ դեպքը հետագայում չմոռանա վկայագրել: Ծրագիր-խոստումը հայ պատմագրության մեջ գերիշխում է հատկապես Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում և բխում է նրա երկի չընդհատվող երկխոսական բնույթից: Նրա մեկենասը՝ Սահակ Բագրատունին, իր ցանկություններում երբեմն առաջ էր ընկնում, և Պատմահայրը, չխախտելու համար իր աշխատության հյուսվածքը, նրան խոստանում էր իր ուզածը ներկայացնել համապատասխան տեղում: «Յիւրում տեղւոջ պատմեսցուք», «ասել կայ մեզ առաջի». այս կարգի ընդմիջարկումները Խորենացու պատմագրքում ամենահաճախ հանդիպող ներտեքստային կառուցվածքային միավորներից են[20]:

Ծրագիր-խոստումի իրականացումը Դավրիժեցին կատարում է երկու ձևով: Նախ՝ լինում են դեպքեր, որ խոստումն իրականացվում է գլուխներ անց: Այդ կերպ՝ «Յաղագս գալստեան Շահաբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց և ունելոյ զամենայն, և վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր» երկարաշունչ վերնագրով Գ գլխում տված խոստումը՝ «Զայս Ջալալոց անուանքն յիշեալ եմք յառաջիկայդ ի մէջ ճառին, որ վասն սովին

---

[20] Տե՛ս, օրինակ, ***Մովսես Խորենացի,*** Հայոց պատմություն, էջ 50, 56, 170, 198, 254, 280, 442 և այլն: